ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՍՄԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԵՎ ԱՇՈՏ ԶԱՔԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 33-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, «ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 21-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ, 4-ՐԴ ԵՎ 5-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Հասմիկ Հովսեփյանի և Աշոտ Զաքարյանի դիմումի հիման վրա՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 5-րդ մասերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. 2021 թվականի օգոստոսի 3-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Հասմիկ Հովսեփյանի և Աշոտ Զաքարյանի դիմումը, որով խնդրել են հետևյալը.

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասը, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և

5-րդ մասերը՝ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանմամբ և կիրառմամբ, ճանաչել ՀՀ Սահմանադրության 60-րդ, 75-րդ, 79-րդ, 80-րդ հոդվածներով սահմանված նորմերի պահանջներին հակասող և անվավեր:

2. Դիմողները նշում են, որ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի՝ իրավական պրակտիկայում տրված մեկնաբանությունները և կիրառումն այնքանով, որքանով հնարավորություն են տալիս սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդհանուր ժողովին կանոնադրական կապիտալի ավելացման գործընթացում որպես լրացուցիչ ավանդների ընդհանուր արժեք որոշել ընկերության տնտեսական գործունեությամբ պայմանավորված անհրաժեշտ գումարից ավել գումար, խախտում են տնտեսական գործունեության ազատության և սեփականության վերաբերյալ սահմանադրական սկզբունքները:

Ըստ դիմողների՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի՝ իրավական պրակտիկայում տրված մեկնաբանությունները և կիրառումն այնքանով, որքանով հնարավորություն են տալիս սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին կանոնադրական կապիտալի ավելացման գործընթացն իրականացնել բաժնեմասի թողարկման և տեղաբաշխման միջոցով, հակասում են իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սկզբունքներին:

Միաժամանակ դիմողները նշում են, որ վիճարկվող իրավանորմերի՝ իրավական պրակտիկայում տրված մեկնաբանությունները և կիրառումն այնքանով, որքանով հնարավորություն են տալիս սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին կանոնադրական կապիտալի ավելացումը և կանոնադրության փոփոխության գրանցումը կատարել վիճարկվող իրավանորմով սահմանված ժամկետների բացթողմամբ, հակասում են իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սկզբունքներին:

Բացի դրանից, վիճարկվող իրավանորմերի՝ իրավական պրակտիկայում տրված մեկնաբանությունները և կիրառումն այնքանով, որքանով հնարավորություն են տալիս իրականացնել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին կանոնադրական կապիտալի ավելացում և կանոնադրության փոփոխության գրանցում այն դեպ-

քերում, երբ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունն ընկերության ժողովի միևնույն որոշումների հիման վրա արդեն իսկ ընդունել է իրավաբանական անձի կանոնադրական կապիտալի կանոնադրության փոփոխության պետական գրանցումը մերժելու մասին վարչական ակտ, հակասում են իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սկզբունքներին:

3. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով ամրագրված են Սահմանադրական դատարանի կողմից գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին հիմքերը, որոնցից են, ի թիվս այլնի, նույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերը (29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ):

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումներով գործի քննությունը, ի լրումն նույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ (…) լրացել է Սահմանադրական դատարան դիմելու համար նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված վեցամսյա ժամկետը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումները կարող է Սահմանադրական դատարան ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական անձը դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառելուց՝ վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան վեց ամիս հետո:

Տվյալ դեպքում դիմողի նկատմամբ Վճռաբեկ դատարանի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը կայացվել է 2021 թվականի հունվարի 13-ին, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 4-րդ մասից հետևում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին Վճռաբեկ դատարանի որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից: Հետևաբար՝ Սահմանադրական դատարան դիմելու վեցամսյա ժամկետը հաշվարկելիս պետք է հիմք ընդունել 2021

թվականի հունվարի 13-ը, որպիսի պայմաններում էլ դիմողի կողմից Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված ժամկետն ավարտվել է 2021 թվականի հուլիսի 14-ին, մինչդեռ սույն գործով դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել սույն թվականի օգոստոսի 3-ին (դիմումին կցված ծրարի վրա առկա է առաքանին 2021 թվականի հուլիսի 26-ին ծառայությանը հանձնելու դրոշմակնիք): Նման պայմաններում դիմողը բաց է թողել Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված վեցամսյա ժամկետը, ինչը հիմք է սույն գործի քննությունը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, մերժելու համար:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

«Հասմիկ Հովսեփյանի և Աշոտ Զաքարյանի դիմումի հիման վրա՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 5-րդ մասերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

2 սեպտեմբերի 2021 թվականի
ՍԴԱՈ-186